ԹԵՄԱ 4

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ ԵՎ ՆՈՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

7. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ. ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թաջ Մահալ

Թաջ Մահալը Հնդկաստանի Ագրա քաղաքում գտնվող մարմարե մահմեդական դամբարան է, որը համարում են աշխարհի ութերորդ հրաշալիք: Այն շատ յուրահատուկ և շքեղ ճարտարապետական կառույց է: Բառը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Թաջ» նշանակում է «թագ», իսկ «մահալ»՝ «արքունիք»:

Սակայն միայն ճարտարապետական կատարելությունը չէ, որ գրավում է տարբեր երկրներից այստեղ ժամանած միլիոնավոր մարդկանց: Նրանց վրա մեծ ազդեցություն է թողնում նաև Թաջ Մահալի ստեղծման պատմությունը, մի պատմություն, որն ավելի շատ նման է արևելյան հեքիաթի:

Թաջ Մահալը կառուցել է Մեծ Մողոլների դինաստիայի կայսր Շահ Ջահանը իր սիրելի կնոջ՝ Մումթազ Մահալի հիշատակին: Ի դեպ, տեղեկություններ կան այն մասին, որ Մումթազ Մահալը հայուհի է եղել, և կայսերական արքունիքում նա է ներդրել Մարաշի ասեղնագործությունը:

Չնայած Շահ Ջահանը մեծ հարեմ ուներ, ինչպես դա ընդունված է ցանկացած արևելյան տիրակալի մոտ, սակայն նա շատ կապված էր Մումթազ Մահալին, որը կայսերը պարգևում է ութ որդի և վեց դուստր: Մումթազ Մահալն ամենուրեք ուղեկցում էր կայսերը տարբեր արշավանքների, ճամփորդությունների ժամանակ: Նա շատ խելացի կին էր, շահը միշտ նրա կարծիքի հետ հաշվի էր նստում: Սակայն վերջին՝ 14-րդ երեխային ծնունդ տալու ժամանակ Մումթազը մահանում է: Մահից առաջ նա խնդրում է Շահին խոստանալ իր համար դամբարան կառուցել և այլևս ոչ ոքի հետ չամուսնանալ:

Կնոջ մահճի մոտ Շահ Ջահանը վշտից միանգամից սպիտակում է: Նա երկու տարով երկրում սուգ է հայտարարում, և այդ ընթացքում արգելված

էին տոները, պարերն ու երաժշտությունը: Որոշ ժամանակ անց Ագրայում՝ Մոնղոլական կայսրության մայրաքաղաքում սկսվում է Մումթազի դամբարանի շինարարությունը, որը տևում է 22 տարի:

Շինարարական աշխատանքներին մասնակցում է ավելի քան 20 հազար մարդ, որոնց թվում էին Պարսկաստանից, Հնդկաստանից, Վենետիկից, Սամարղանդից հրավիրված լավագույն շինարարներ և ճարտարապետներ: Ի դեպ, նրանց թվում եղել են նաև հայ շինարարներ: Նրանցից մեկին՝ Գրիգոր անունով, կոչում էին մեծ վարպետ-կառուցող: Ի դեպ, նա մասնակցել է ոչ միայն Թաջ Մահալի, այլև Շահ Ջահանի ճարտարապետական այլ գլուխգործոցների կառուցմանը:

Թաջ Մահալի բարձրությունը գմբեթի հետ միասին 74մ է: Նրա չորս կողմում կառուցված մինարեթների բարձրությունը 42մ է: Այս կոթողն ամբողջությամբ կառուցված է ձյունասպիտակ մարմարից: Այն հիացնում և ապշեցնում է նաև նրբագեղ աշխատանքով, ասես մարմարի վրա արված ասեղնագործ լինի: Ողջ շինությունը դրվագազարդված է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից պատրաստված ծաղիկներով, տերևներով, ինչպես նաև Ղուրանի որոշ սուրաներով:

Դրվագազարդումը կատարվում է այսպես. նախ մարմարի վրա փորագրվում է ծաղիկը, այնուհետև թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից շատ բարակ տաշեղներ են կտրվում և սոսնձվում պատրաստված տեղում:

Յամունա գետի մյուս ափին՝ Թաջ Մահալի դիմաց, Շահ Ջահանը մտադիր էր մեկ այլ դամբարան կառուցել: Դա էլ իր համար, որը պետք է լիներ սև մարմարից: Երկու դամբարանները պետք է միմյանց միանային կամրջով: Սակայն նրա որդին՝ Ջահանգիրը, որին արդեն հոգնեցրել էին հոր անտեղի հսկայական ծախսերը, Շահ Ջահանին գահընկեց է անում և տնային կալանքի տակ առնում իր պալատում: Նախկին կայսրը կարող էր միայն իր կալանասենյակի պատուհանից տեսնել հեռվում երևացող իր հավերժական սիրո խորհրդանիշը:

Շահ Ջահանի մահից հետո նրան թաղում են նույն դամբարանում՝ իր սիրած կնոջ կողքին: Ահա այսպիսին է Թաջ Մահալի՝ հնդկա-իսլամական արվեստի գլուխգործոցի գեղեցիկ և տխուր պատմությունը: